



Դուք երբայիք լրագրեցեալ մասնով
ծախքը տուողին վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ մասնի կամ որ
եւ իցէ գրութիւն Խմբագրին տիրի
ուղղութիւն. եւ առանց մամբռն ծախս
քը խրկողին վրայ է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 4 ԱՊՐԻԼ

ՊՐԵՍԲԱՆԻՆ ԶԵՆՈՒԹԱՐԱՐԱՆ

ԼՈՒՐԵՐԸ

Մարտիկա 45 աղբիւ:

Յորեն նորն փոխակի մէջ, թուր-Մետաքս
եւ խողակ թուր, մանուշակ իշնալու հա-
կաւոր: — Մուսա 64: — Փոխանակութիւն
23 10: — Յօնտո 70: — Բօնտօլիտէ 94:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հեռագիրն անցեալ շաբթու Օս-
մանեան նոր փոխառութեան վրայ Մեդ-
ղեյ խորհրդարանին մէջ Լորտ Բարթոլ-
թիւնի ըրած մէկ առեւտրամտութեան քա-
նի մը նշանաւոր խօսքերը մեզի հայորդե-
րէր, որոնք լրագրոյս 528 թուովն հրատա-
րակած ենք:

Եւս շաբթու նոյն կարեւոր ատենա-
բանութեան ամբողջ օրինակը ձեռքերնիս
հասնելով, կը փութանք մեր արդոյ ըն-
թերցողաց աչքին առջև դնել դայն:

Մ. Հիւսպարտ ժողովականը Օս-
մանեան նոր փոխառութեան վերաբերեալ
առաջարկութիւններուն մէջ Մեդղեյ կա-
ռավարութեան ունեցած մանակցութեա-
նը վրայ խորհրդարանին ուշաբլութիւնը
հրաւիրեց, հասկնալու համար թէ Մեդ-
ղեյ կառավարութիւնը որ և է կերպով
նոյն փոխառութեան պատասխանատու ե-
ղած է:

Եւս հարցման Լորտ Բարթոլթիւն
հետեւեալ պատասխանը տուաւ:

« Թուրքաստանի կառավարութիւնը
խնայող թէ իր երեւոյթը կարգի դնե-
լու ամենամեծ գիտաբանութիւնն ունէր:

Ս. Թագուհեյն կառավարութիւնն ալ
Թուրքաց կառավարութեան խնդրանքը
երկու խիտ յաջորդական անգամ Լորտ
Զօ պարթն և Մ. Գօրթթեյը ղեկեց, որպէս
զէ յիշեալ երկրին երեւոյթը վերաբերեալ
ամեն բան մանրամասնաբար քննեն: Եւս
Պարթոնները խիտ շահաւէտ տեղեկագիր
մը շննդեցին: Թուրքաց կառավարութիւ-
նը ասոնց ուղած ամեն տեղեկութիւննե-
րը դիւրացուց: Տէրութեան ամեն պաշ-
տօնատեղիները մուտք ունեցան, և Թուր-
քաստանի երեւոյթը վիճակին և գործածու-
թեանը վրայ լիակատար ծանօթութիւն ըս-
տանալու համար ամեն տրիւններէ տեղե-
կութիւն քաղեցին:

« Յիշեալ Պարթոններուն առաջար-
կած կարգադրութեանց մէկ մասն էր շը-
շաբթութեան մէջ եղած թղթադրարձի-
ն որ չափազանց շատ էր՝ ժողովը, և դանդա-
ղ մեծացեալ դրամով կամ պայմանաւորով
վճարելի տոկոսաւոր թուրքերով փոխա-
նակել:

« Թուրքաց կառավարութիւնը քա-
նի քանի փորձեր ըրաւ փոխառութիւն մը
ընելու և չիքցաւ իրեն պէտք եղած սոս-
կը ձեռք բերել: Խիտ ծանր պայմաններ
առաջարկուեցին համար: Եւս ժամանա-
կը Մեդղեյ դիմելով հասկնալու որ կրնար
աւելի տարբեր պայմաններով ստակ ձեռք
բերել թէ որ Ս. Թագուհեյն կառա-
վարութիւնը կարող ըլլար քանի մը ձե-

ռնհաս անձեր Կ. Պօլիս ղեկելու, և
Թուրքաց կառավարութեան հետ միա-
բանութեամբ ապահով ըլլալու թէ ա-
ռաջարկեալ փոխառութեանն գոյացած
ստակը՝ ինչ բանի համար կուզուէր նե-
անոնց պիտի գործածուէր, այն է թղթ-
թադրարձի բարձմանը և ուրիշ յանձնա-
ռութիւններու կատարման:

Ս. Թագուհեյն կառավարութիւնը
չէր կրնար մերժել սոյսպիսի խնդրուածք մը:
Եւս ժամանակը Թուրքաց կառավարու-
թիւնը կրնար իրաւամբ մեզ մեղադրել իր-
րեւ Թուրքաստանի յաջորդութեանը ան-
փոյթ, և չըտնել աւելի:

« Հիմա ես բացորոշ կերպով կըսեմ
թէ Մեդղեյ կառավարութիւնը որ և է ինչ
պատասխանատուութիւն մը չէ առած իր
վրայ սոյն փոխառութեան տոկոսին վճար-
մանը նկատմամբ: Լորտ Զօ պարթն՝ որ այս
պարտաւորութիւնը անձնուիրութեամբ
ընդունած է, հետեւեալ պաշտօնը պիտի
կատարէ: Թուրքաց կառավարութիւնն
թողտուութիւն առնացած է վերահասու-
րելու թէ փոխ առնուած ստակը իր նը-
պատակին համար կը գործածուի մի:

« Յայտնի է թէ երկար ժամանակէ
ի վեր Թուրքաց երեւոյթը վերջն ծայր
անկարգութեան ու շփոթութեան մէջ
էր: Եւս իմանելով զօրքերն ամսական չէին
առած: Եւս կերպ յանձնառութիւններ
ու պայմանաւոր պարտքեր եղած էին ու
րոնք կատարելու բնաւ ձարձկար և գե-
շութիւնը այն աստիճան հասեր էր որ
Թուրքաց կառավարութիւնը անձկանա-
բարեկարգութեան կը ցանկար:

« Հարկ չէ ըսել թէ Թուրքաստա-
նի վրայ տիրող կառավարութիւնը զօ-
րաւոր պէտք է ըլլայ: Եւս կրնանք
բարեկարգութիւնը ամեն աղբային գորու-
թեան խորիսին ու հիմնէ: Մինչև որ
Թուրքաստանի երեւոյթը կանոնաւոր
վիճակի մը մէջ չըլլաւ, ուրիշ իրապէս օգ-
տակար ըլլալը օժանդակութիւն մը չը
կրնար ըլլալ ստոր:

« Բայց պէտք է միտքերնիս բերելք
թէ Թուրքաց տէրութիւնը երկրագուն-
տիս ամենեւն բարեբեր և գեղեցիկ մասե-
րէն մէկ քանին իր մէջ պարտնակէ: Կը-
լիսի և հողի ամեն քանակութիւնն
ըր կը բովանդակէ իր մէջ՝ անհաշուելի
հանքային հարստութիւններով և աշխարհ-
հաղթական ու երկրագրական առաւելու-
թիւններով, որոց կողմանէ աշխարհիս ազ-
գերէն և ոչ մէկը չկրնար անոր հետ մը-
ցիլ:

« Բնակիչները խառն ազգ մ'ուն, չէ
թէ ուշիմութեան կողմէն ստորին, այլ
կրօնական կարծեաց անհամաձայնութիւն-
ներով իրարու հակառակ: Բայց կրնանք
յուսալ որ լուսաւորութեան ծաւալումը
որ այս վերջին տարիներս Թուրքաց վար-
չութեան ընթացքին նկարագրիր եղած է,
այժմեան կառավարութեան օրովն ալ կը
շարունակէ, և կրօնական ատելութիւննե-
րը՝ որ երկար ժամանակ Թուրքաստանը
յուզեցին, այսուհետեւ կը հանդարտին,
և վերջապէս անհետ կըլլան:

« Եւս մեծ բարեկարգութիւնները
կը կատարուին Թուրքաստանի մէջ, և
վարչական դրութիւնը շատ մասամբ կը
բարձրի, բայց աս բաները ժամանակի կա-

րօտ են, և մէկը չկրնար այս պայմանաւոր-
մը ձեռք բերել առանց իր պարտքերը վը-
ճարելու:

« Հետեւապէս, ինչ բան որ Սուլ-
թանը կարող կրնէ իր տէրութիւնը եւ
մրտական գիտաբանութիւններէն ազատելու
որոց մէջ գիտաբանաբար ինկած է սիւղ-
բէն, թող կուտայ նաեւ անոր ի գործ
դնել այն ընկերական, քաղաքական և կը-
րօնական բարեխառութիւնները, որոց Սուլ-
թանը անհամբերութեամբ փափաքելուն
համոզուած եմ:

« Յարգի պարտքը կըսէ թէ Թուր-
քաց տէրութիւնը մեղի ոսկոյ չեղձա-
կողաներու և արեան հեղեղներու նստած
է: Եւս, ես կըսեմ ձեզ, որ եթէ կըր-
նար Թուրքաստանը ծաղկեալ, անկախ և
հզօրապէս վաճառական երկիր մը ընել,
ինչպէս որ կը յուսամ թէ քիչ ժամա-
նակէն պիտի տեսնեմ, այն ժամանակը
ազատ կը մնանք եւրոպական տէրութեանց
հաւասարակշռութեան վտանգներէն, ու
ընեն անցեալին մէջ աւելուիլ տնտեսական
ծախսը և արիւն հեղութեանց պատճառ
եղած է:

« Չից բան մը որ Եւրոպայի յա-
րատեւ խաղաղութեանը այնչափ աւելի
նպաստէ՝ որչափ պիտի նպաստէ Թուր-
քաստանի մէջ հզօր անկախ և բարւոք
մտաւարարութեամբ կառավարութեան մը
հաստատուիլը: Ար յուսամ որ այս վախ-
ձանին հասնելու յոյս կրնանք ունենալ
իրաւաւր: Բնականաբար շատ դժուարին
է հին գեշութիւններն ուղղել և մինչև
հիմա շփոթութիւն տիրած տեղ մը բարե-
կարգութիւն հաստատել:

« Բայց ես աներկբայ եմ որ երկրիս
խորհրդարանները խեղճաբար կըլլան թէ
Ս. Թագուհեյն կառավարութիւնը այս
նպատակին հասնելու համար արժան և
ղած օժանդակութիւնը ընելով, մանա-
ւանդ երբոր այս ձեռնադրութիւնը կրնայ
ընել առանց մեր երկիրը պատասխանա-
տու ընելու, իր պարտքը կը կատարէ և
երկրին հաւանութիւնն ստանալու իրա-
ւունք ունի: » (Նախահարութիւնը):

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

Բ. Դրան կողմանէ 1278 չէվալ 4 թուա-
կանով Բուսիոյ գեապանատան ուղղուած
պաշտօնագրոյն թարգմանութիւնը:

Ինչպէս որ ծանօթ է ձեր վսեմութեան,
ազգայնութեանց խնդրոյն լուծմանը հա-
մար վերջին անգամ կազմուած խառն
Հանձնաժողովն արդէն սկսած է ու կը
շարունակէ նախ Օսմանեան հպատակ ե-
ղող ու պատերազմի վերջէն ի վեր Ռու-
սիոյ հպատակութեան պահանջում ու-
նեցող անձերէն մայրաքաղաքիս մէջ գրա-
նուորներուն քննութիւնն ու ստուգումը:
Եւ թէպէս Բ. Դրան և կայսերական
գեապանատան մէջ տեղի ունեցած որոշ-
մանը նայելով, այս վերջինին կողմանէ ներ-
կայացուած ցուցակին համեմատ, այդ հը-
պատակութիւնը պահանջող անձանց
յանձնաժողովին առջև դրալով ներկա
յուրութիւնն յայտնել հարկ կըլլայ, բայց

չգիտենք ի՞նչ պատճառաւ, ասոնց կող-
մանէ այս մասին դանդաղութիւն մը տես-
նուելուն համար, ձեր վսեմութիւնը՝ ինչ-
պէս որ իր արդարադատութիւնը կը պա-
հանջէր, ծանուցում ըրաւ վերջին անգամ
սոյն անձանց՝ է՛ն ու շ. քառասուն օրուան
միջոցի մէջ վերոյիշեալ Հանձնաժողովին
առջև ներկայանալու հարկաւոր ըլլալը և
միանգամայն անոնց մէջէն՝ եթէ դոնուին
որ նշանակուած միջոցին մէջ ներկայանան
այն անձանց համար Հանձնաժողովը իբր
լուծուած և անդոյ բռնուիլը:

Եւ որովհետեւ երկու բարձրագոյն
Տէրութեանց սերտ փափաքն է որ այս
գործին վերջաւորութիւն մը տրուելով՝
անկէ երկու կողմանց պաշտօնատեղիներուն
մէջ առաջ եկած անհամաձայնութիւն
ները դադրին, նոյն խի սոյն նպատակին
համար ալ պէտք է որ վերոյիշեալ ան-
ձինքներէն Ռուսիոյ հպատակութեան
մէջ կեցողները Հանձնաժողովին պաշ-
տօնին գործադրութեան եղանակին վերա-
բերեալ կարգադրուած դաշնագրոյն մէջ
նշանակուած միջոցին իրենց դարձեր կար-
գադրել կարենալու համար՝ նախ և առաջ
Հանձնաժողովին առջև ներկայանան:

Հետեւաբար, ինչպէս վերը յիշուե-
ցաւ, ձեր վսեմութեան կողմանէ տեղի
ունեցած ծանուցման համեմատ՝ բայց ի
այն անձինքներէն որ թէպէտ վերոյիշեալ
ցուցակին մէջ նշանակուած են, բայց ըստ
դաշնագրոյն տրամադրութեանց՝ Հանձ-
նաժողովին գործի սկսած օրէն առաջ մնա-
լաքաղաքէս բացակայ գտնուած ըլլալին
կրնան պաշտօնական կերպով հաստատել
և որոնք մինչև այն օրը Պօլիս չեն դար-
ցած, բոլոր անոնք որ Հանձնաժողովին
չեն ներկայացած, ի հարկէ իրենց վարե-
մի հպատակութեանը մէջ մնացած հա-
մարուելով, բնական է որ այս տեսակ ան-
ձանց առաջ բերելու վրայ եղած Ռու-
սիոյ հպատակութեան կամ պաշտպանու-
թեան որ և է պահանջումը անընդունե-
լի պիտի բռնուի: Ուստի ի՞նչ եմ յուսով որ
ձեր վսեմութեան քաջամտութիւնը արդարա-
սիրտութիւնը այս մասին բոլորովին համա-
ձայն պիտի գտնուի, և կը փութամ այս
առթիւ նորոգել իմ բարձր յարգանացս
հաւաստիքը:

(Ստորագրեալ) Աւալի

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

Ռուսիոյ դիւանաւարանէն ինչպէս ծանուցա-
վուած է:

Ռուսիոյ այն հպատակները՝ որ 1855
թուականին սկսեալ բնիկ քաղաքացոյց ի-
րաւունք ընդունած են, եւ որոնք իրենց
վիզայագիրները՝ քննելու համար հաստատ-
ուած խառն յանձնաժողովին վճիռները առած
են արդէն, անոնց կը յիշատուցուի որ՝ կայսե-
րական գեապանատան եւ Բ. Դրան համա-
ձայն հաւանութեամբ կազմուած դատա-
սանական խառն յանձնաժողովը՝ հինգշաբթի
օրը 12/24 ապրիլի իր նիստերը պիտի սկսի
վաճառականութեան պաշտօնէին ապարանքը,
եւ (ըստ Եւրոպացոց) առաւօտեան ժամը
սասնէն սկսեալ մինչև յետ միջօրէին ժամը
չորսը՝ իր նիստերը պիտի շարունակէ՝ ամեն
օր, բայց ի կիրակի և ուրբաթ օրերէն:

Կայսերական հրամանաւ
Արքունի սենեկապան Վեվլէս պէյը

